ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 24

04 մարտի 2013 թվականի

ՄԱՐՏԻ 8-Ի ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 17 կետի դրույթներով ***որոշում եմ***

1) 2012 թվականի մարտի 8-ին կանանց միջազգային օրվան նվիրված միջոցառում կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով

Հանձնաժողովի նախագահ – Գ. Գրիգորյան – գլխավոր մասնագետ

անդամներ – Ս. Սարոյան – մանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն

Ս. Հակոբյան – արվեստի դպրոցի տնօրեն

Մ. Անտոնյան – մշ. երիտասարդական կենտրոնի տնօրեն

Ե. Ուռումյան – քաղաքային գրադարանի տնօրեն

Լ. Հայրապետյան – նախադպ. հիմնարկի տնօրեն

2) Քաղաքապետարանի գլխավոր մասնագետ հաշվապահ Ա. Սաղաթելյանին միջոցառման կազմակերպման և նվերների ձեռքբերման համար հատկացնել 250000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ 2013 թվականի բյուջեի վարչական մասի 08.2.4.51 դասակարգման (այլ մշակութային կազմակերպություններ) 4269 (հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածից:

3) Մշակել և իմ հաստատմանը ներկայացնել միջոցառման ծրագիրն և ծախսերի նախահաշիվը:

Քաղաքապետ՝ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

20 13 թ. մարտի 04
ք.Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 25

04 մարտի 2013 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՄԱԴԱԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 44 Ա ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ՖՌՈՍՅԱ ՉԱՐՉՈՂԼՅԱՆԻ ԵՎ ԳԱԳԻԿ ՉԱՐՉՈՂԼՅԱՆԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ, ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Մարալիկ քաղաքի Մադաթյան փողոցի N 44 Ա հասցեի բնակիչներ Ֆռոսյա Չարչողլյանի և Գագիկ Չարչողլյանի 26 փետրվարի 2013 թվականի դիմումը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ 1988 թվականին իրենց հատկացված 44 Ա հասցեի 0.09985 հա հողամասում կառուցվել է ավտոտնակ և օժանդակ շինություն, սակայն սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերը չեն պահպանվել, ուստի ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության 37 հոդված դրույթներով <<Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների դրույթներով ***որոշում եմ***

1. Մարալիկ քաղաքի բնակիչներ Ֆռոսյա Չարչողլյանի և Գագիկ Չարչողլյանի ք. Մարալիկ Մադաթյան փողոցի N 44 Ա հասցեի 0.09985 հա հողամասում 1988 թվականին կառուցված ավտոտնակի և օժանդակ շինության <<Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի վերաբերյալ>> գույքային իրավունքը վերականգնել և ճանաչել նրա սեփականության իրավունքը:
2. Սույն որոշման մեկ օրինակ ներկայացնել Անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցում կատարելու նպատակով:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքապետի 2012 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 137 որոշումը:

Քաղաքապետ՝ **ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

20 13 թ. մարտի 04
ք.Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 26

04 մարտի 2013 թվականի

ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԴԻՄԻՏՐՈՎ ԵՐԵՄԻ ՍԱՐՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ԱՌԱՆՁՆԱՏՈՒՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37 հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 25-ի N 2387-Ն որոշմամբ՝ Մարալիկ քաղաքի բնակիչ Դիմիտրով Երեմի Սարոյանին պատկանող բնակելի առանձնատունը վերահասցեավորելու նպատակով ***որոշում եմ***

Մարալիկ քաղաքի բնակիչ Դիմիտրով Երեմի Սարոյանին պատկանող ք. Մարալիկ Կոմսոմոլի փողոց N 17 բնակելի առանձնատունը վերահասցեավորել ք. Մարալիկ Երիտասարդականների փողոց N 17:

Քաղաքապետ՝ **ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

20 13 թ. մարտի 04
ք.Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 27

05 մարտի 2013 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՌԱԶՄԻԿ ՄԱՐՏՈՒՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Մարալիկ քաղաքի Կոլտնտեսականների փողոցի N 8 հասցեի բնակիչ Ռազմիկ Մարտունի Կարապետյանի 05 մարտի 2013 թվականի դիմումը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ռազմիկ Մարտունի Կարապետյանի կողմից Կոլտնտեսականների փողոցի N 8 հասցեում 1984 թվականին կառուցվել է բնակելի տուն, կաթսայատուն, բնակելի տուն, 1989 թվականին՝ ավտոտնակ, 1992 թվականին՝ անասնաշենք, սակայն սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերը չեն պահպանվել և միաժամանակ օրինական հատկացված 0.10 հա հողամասին կից ավել օգտագործվում է 0.04698 հա հողամաս, ուստի ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության 37 հոդված դրույթներով <<Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների դրույթներով ***որոշում եմ***

4. Մարալիկ քաղաքի բնակիչ Ռազմիկ Մարտունի Կարապետյանի (ծնված՝ 18 հունվարի 1965 թիվ) քաղաք Մարալիկ, Կոլտնտեսականների փողոցի N 8 հասցեում 1984 թվականին կառուցված բնակելի տան, կաթսայատան, բնակելի տան, 1989 թվականին կառուցված ավտոտնակի, 1992 թվականին կառուցված անասնաշենքի, ինչպես նաև օրինական հատկացված 0.10 հա հողամասի <<Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն 0.0300 հա անհատույց հատկացնել Ռ. Կարապետյանին, իսկ մնացած 0.01698 հա հողամասի համար կնքել հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր՝ մուծելով գումար տվյալ պահին գործող հողի կադաստրային արժեքի չափով, գույքային իրավունքը վերականգնել և ճանաչել նրա սեփականության իրավունքը:
5. Սույն որոշման մեկ օրինակ ներկայացնել Անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցում կատարելու նպատակով:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

20 13 թ. մարտի 05
ք.Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 28

05 մարտի 2013 թվականի

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության 37 հոդվածի 5-րդ կետի դրույթներով ***որոշում եմ***

6. Մարալիկ քաղաքի Նոր թաղամասի 10-րդ փողոցի N 22 հասցեում սեփական հողամասում գտնվող կիսակառույց նկուղի վրա անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով տալ շին. թույլտվություն Մարալիկ քաղաքի բնակիչ Խաչիկ Կառլենի Հովսեփյանին:
7. Գլխավոր մասնագետ Գ. Գրիգորյանին՝ սահմանված կարգով իրականացնել շինարարական նորմերի պահպանմանը:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

20 13 թ. մարտի 05
ք.Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 26

05 մարտի 2013 թվականի

ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՌԱԶՄԻԿ ՄԱՐՏՈՒՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ԱՌԱՆՁՆԱՏՈՒՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37 հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 25-ի N 2387-Ն որոշմամբ՝ Մարալիկ քաղաքի բնակիչ Ռազմիկ Մարտունի Կարապետյանին պատկանող բնակելի առանձնատունը վերահասցեավորելու նպատակով ***որոշում եմ***

Մարալիկ քաղաքի բնակիչ Ռազմիկ Մարտունի Կարապետյանին պատկանող ք. Մարալիկ Կոլտնտեսականների փողոց N 8 բնակելի առանձնատունը վերահասցեավորել ք. Մարալիկ Կոլտնտեսականների փողոց 5-րդ նրբանցք N 22:

Քաղաքապետ՝ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

20 13 թ. մարտի 05
ք.Մարալիկ